# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

**«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/16» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյանը, Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Գևորգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 30.08.2019 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/57 որոշումը կատարելու և «Ֆիլիշին» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին

(Ա. Խաչիկյան)

1.1 Փաստաթղթերի գնահատման՝
- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 05.09.2019թ.
-ժամը՝ 11:00

1.2 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 30.08.2019 թվականի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/57 որոշումը (հրապարակված՝ 03.09.2019թ.) գնահատող հանձնաժողովը որոշեց ընդունել «Ֆիլիշին» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը (փաստաթղթային ձևով):

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով և գնահատելով «Ֆիլիշին» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը արձանագրեց հետևյալը.

1. Հրավերի ՄԱՍ I-ի 1.1 կետով ներկայացված է բոլոր չափաբաժինների անվանումները ներկայացված են, որպես (վերելակ 1, վերելակ 2 և շարունակելի մինչև վերելակ 12), ինչպես նաև տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով բոլոր չափաբաժինների համար գնման առարկայի անվանումը ներկայացված է բացվածքով, այն ինչ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում գնման առարկան ներկայացված է որպես՝ (Վերելակներ (4-6 ուղեվոր)), որը չի համապատասխանում հրավերի պահանջներին՝ այն է նման անվանմամբ գնման առարկա հրավերով բոլոր չափաբաժինների համար սահմանված չէ, ինչպես նաև՝ մասնակցի կողմից առանձին տողով ներկայացվել է 1 վերելակի հաշվարկով տեղադրման արժեք (առանց վերելակների լիսեռի վերանորոգման), որը նույն պես դուրս է հրավերով սահմանված գնման առարկաների տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներից:
Գնահատող հանձնաժողովը արձանագրեց նաև, որ մասնակցի կողմից ներկայացված ընդհանուր գնի 12366816 ՀՀ դրամի ԱԱՀ-ն կազմում է 2061136 ՀՀ դրամ, այն ինչ գնային առաջարկում ԱԱՀ գումարը ներկայացված է 1927296 ՀՀ դրամ գումարի չափով, որը նույն պես չի համապատասխանում օրենսդրական պահանջներին:

Վերոգրյալով պայմանավորված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով որոշեց մերժել «Ֆիլիշին» ՍՊ ընկերության հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

## 2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ հայտարարելու մասին
(Ա. Խաչիկյան)

2.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

| Հ/Հ | 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել | | | հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից | հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից |
|---|---|---|---|---|---|
| | Մասնակցի անուն | Պայմ. գին | ԱԱՀ | | |
| 1 | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ | **18900000** | + | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | «ՎԵՐԵԼԱԿՄՈՆՏԱԺ» ՍՊԸ |
| 2 | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ | **43100000** | + | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | «ՎԵՐԵԼԱԿՄՈՆՏԱԺ» ՍՊԸ |
| 3 | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ | **9600000** | + | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | «ՎԵՐԵԼԱԿՄՈՆՏԱԺ» ՍՊԸ |
| 4 | «ՎԵՐԵԼԱԿՄՈՆՏԱԺ» ՍՊԸ | **10560000** | + | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ |
| 5 | «ՎԵՐԵԼԱԿՄՈՆՏԱԺ» ՍՊԸ | **10560000** | + | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ |
| 6 | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ | **21900000** | + | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | «ՎԵՐԵԼԱԿՄՈՆՏԱԺ» ՍՊԸ |
| 7 | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ | **17000000** | + | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | «ՎԵՐԵԼԱԿՄՈՆՏԱԺ» ՍՊԸ |
| 8 | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ | **9700000** | + | «ՎԵՐԵԼԱԿՄՈՆՏԱԺ» ՍՊԸ | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| 9 | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ | **8300000** | + | «Էլիվեյթոր Շեն» ՍՊԸ | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| 10 | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ | **18500000** | + | «ՎԵՐԵԼԱԿՄՈՆՏԱԺ» ՍՊԸ | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| 11 | «Էլիվեյթոր Շեն» ՍՊԸ | **9599000** | + | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ |
| 12 | «ՌԱՖԷԼԳՐԻԳ» ՓԲԸ | **12200000** | + | «ՎԵՐԵԼԱԿՄՈՆՏԱԺ» ՍՊԸ | «Դ-Լ 777 ԳՐՈՒՊ» ՍՊԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց armeps համակարգով վերջացնել գնահատումը, որից գնահատման հաշվետվության բեռնումից հետո (Evaluation) առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-

րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.**

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | | Ա. Խաչիկյան |
| Անդամներ՝ | | Վ. Առուշանյան |
| | | Գ. Մեհրաբյան |
| | | Հ. Ռամազյան |
| | | Ա. Գևորգյան |
| Քարտուղար՝ | | Գ. Մուրադյան |